

ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՏԵՏՐ 8

1902 ՆՈՅԵՄԲԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՍ

ԲԱԶՈՒՄ ԱՂՄՈՒԿ

Լահանայի քերթ «Արշալոյս»ը ունէինք եզրպտոս, քահանայի տերտ ալ տիրացու Միհրան Ղազարտեանի խնդիրը ունեցանք:

Ո՛հ, Հոկտեմբեր 18ի շարաթ իրիկուան իրարանցումը Ս. Պողոս Պետրոս եկեղեցիին մէջ: Կիները կը պոռան, մարդիկը կը հայհոյեն, տղաքը կը ճչեն, առաջնորդը բէշերը ժողված զանգակատան մէջ կ'ապաստանի, Վսեմ Բարթող պէյ ի զուր կը ջանայ ամէն միջոցներով բարեկարգութիւնը վերահաստատել սրբալայրին մէջ, Մ. Տամատեան իր սպայակոյտով յարձակմամբ կը մտնէ եկեղեցիին ամրացեալ դռնէն ներս, Տէրվիչեան ու Ղազարեան թուքով կը մկրտեն զիրար, երկոքեան եղբարք Գրիգորեանք, ժամանակակից մարտիրոսք հաւատոյ, քաշկոտուելով կը տարուին եկեղեցիէն դուրս, ու այս բազմաձայն, խժալուր իրարանցումին կը խառնուին արար ստիկաններու ձխազուտոյթ աղաղակները: Ին՛դձ Նշան Ամատունի փոխանակ յուզումը մարել աշխատելու, ինք յուզումէն կը մարի, մինչ Միհրան Թէլեան տենդոտ քայլերով իր գրասենեակէն մէջ ժուռ կուգայ երկու ձեռք՛րովը

գլուխը բռնած՝ որովհետեւ չէր կրնար գլխովը երկու-
ձեռքերը բռնել :

Իրաւամբ ձայնաւոր Միերան ասկէ աւելի ձայ-
նաւոր օծում մը չէր կրնար երեւակայել իրեն հա-
մար :

Եւ ինչո՞ւ այս ամէնքը, ինչո՞ւ այս խառնածայն
տակնուզարաւթիւնը, ինչո՞ւ բանթօմիմի փոխուած
այդ եկեղեցական արարողութիւնը. — Որովհետեւ մեր
առաջնորդը, Յովսէփ (ո՛չ Գեղեցիկ) եպիսկոպոս Այ-
վազեան չգիտցաւ կամ չուզեց խնդիրը անուշ տեղը
կապել :

Որքա՞ն դիւրին կերպով այս խռովութեան ա-
ռաջքը պիտի առնուէր եթէ մեր առաջնորդը ժողո-
վըրդեան կողմէ ցոյց տրուած առաջին ընդդիմութեան
պահուն, հետեւելով Յիսուսի օրինակին, անուշու-
թեամբ բռնէր տիրացու Ղազարոսեանի օձիքէն եւ
«Ղազարէ՛, արի՛ ել յարտաքս» ըսելով զինքը եկեղե-
ցիէն դուրս հանէր ու գոնէ արժամապէս դադրեցունէր
քահանայագործման արարողութիւնը :

Ժողովրդին դիւրագածութիւնը վերաւորելով՝
պատճառ եղաւ որ մինչեւ այն ատեն անտարբեր մնա-
ցողներն ալ իր արարքին դէմ զինուին ու այսպէս
պզտիկ միջազէպ մը խոչոր դէպքի մը փոխեց :

Հետեւակ ու ձիաւոր ոստիկաններու «արաբական
արչաւանք»ն ալ, եկեղեցիին շրջափակին մէջ, կրնար
տեղի չունենալ եթէ առաջնորդը փոխանակ վսեմ.
Բարթող պէյի դիւրագրգռութիւնը շահագործելու, իբր
խաղաղութեան կրօնքի մը ճշմարիտ պաշտօնեան,
տարբեր կերպով ներչնչէր Բարթող պէյը :

Երբ քահանայապետին մարդիկը սուրբրով ու բի-
րերով զինուած ու նախատական սղաղակներ արձա-

կելով եկան Յիսուսը բռնելու, Պետրոս Առաքեալ, բարկութեան վայրկենի մը մէջ, իր Տէրը պաշտպանելու մտադրութեամբ՝ սուրովը քանանայապետի ծառային՝ Մաղքոսի ականջը կտրեց։— «Սուրդ իր տեղը դարձուր», ըսաւ Քրիստոս։

— «Ոստիկանները իրենց տեղը դարձո՛ւր» պիտի ըսէր անշուշտ նոյն Քրիստոսը Վսեմ. Բարթող պէյին ալ, եթէ շաբաթ իրիկուն դէպքին ատեն եկեղեցին գտնուէր։

Բայց ո՛ւր Յիսուս, ո՛ւր Յովսէփ Այվազեան . . .
Յաթոն Մովսէսի նստան դպիրք եւ Փարիսեցիք։

ՄԻԹԻՆԿԸ

Շաբաթ իրիկուն իրողութիւնը ա՛լ բացարձակապէս ցոյց տուաւ թէ՛ որքա՛ն ապիկար, հետեւաբար մլասաբեր առաջնորդ մը ունէ՛լինք մեր գըլուխը։ Ժողովուրդը ուղեց առաջնորդին նկատմամբ իր սրտամտութիւնը օգտակարապէս գործածել եւ ասոր համար կարգադիր մասնախումբ մը, Բիրամիտ թաւրոնին մէջ, երկուշաբթի օր միթիինկ մը կազմակերպեց, որուն ներկայ գտնուեցան չորս հարիւրէ աւելի ազգայիններ։ Միթիինկին նպատակն էր, ինչպէս նախապէս ձրուած ազդ մը կը յայտնէր, առաջնորդին արարքը դատապարտել։

Միթիինկը տեղի ունեցաւ ամենայն բարեկարգութեամբ։ Տ. Մ. Տամատեան, երկար բանախօսութեամբ մը, որուն մէջ փայլեցուց իր տրամաբան ու միանգամայն խայթող պերճախօսութիւնը, մէկիկ մէկիկ քննութեանէ անցուց մեր առաջնորդին գործած սխալները, իր պաշտօնավարութեան շրջանին մէջ եւ

եղբակացուց թէ՛ կա՛մ ծովուն կա՛մ Գահիրէի ճամբան
կը մնար իրեն ընտրել:

Բանախօսութենէն ետքը, պատրիարքարանի ուղ-
ղուած խնդրագիր մը կարդացուեցաւ, որով կը խնդ-
րուէր ազգային իշխանութենէն առաջնորդին պաշ-
տօնանկութիւնը եւ միանգամայն յետաձգումը տիրա-
ցու Միհրանի ձեռնադրութեան:

Ներկաները խանդավառութեամբ ստորագրեցին
խնդրագիրը եւ միթիւնկը ձրուեցաւ:

Ժողովուրդը ասկէ աւելի օրինաւոր ձեւ մը չէր
կրնար տալ շարաթ օրուան դէպքերուն առթիւ զգա-
ցած ցասումին:

ՎԱՐԿԱԲԵԿ ԽՄԱԿԸ

Բնական էր որ տիրացու Միհրանի ձեռնադրու-
թեան հետեւանքով առաջ եկած միաքերու յուզումնալից՝
թէեւ կարճատեւ՝ վիճակը շահագործել ուզէր Մարտի
քուէարկութեամբ տապալած խմբակը: Ասիթ մըն էր
ասիկա մէկ կողմէն վարկաբեկ ընել փորձելու Վսեմ,
Բարթող Պէյը եւ մյուս կողմէն աժան գնով ժողովըր-
դականութիւն շահելու: Միայն թէ պէտք էր խեղա-
դիւրել իրողութիւնները, թիւրիմացութիւններ դար-
բնել, մեքենայութիւններ լարել ու վերջապէս ամէն
միջոցներով եղածներուն պատասխանատու ցոյց տալ
Բարթող Պէյը:

Այս ամէնուն համար անհրաժեշտ եղող մարդը
եկած էր Եւրոպայէն ու ահա՛ խառնակութիւնները
սկսան:

Տիրացու Միհրանը քահանայութեան անարժան
ճշդակող հանրագիրը ծածկուեցաւ Գրիգոր Մեկքոն-

եանի խմբակին մարդոց ստորագրութեամբ (*): Լեւոն Մկրտիչեան եւ իր հլու հետեւորդները գիտէին որ ուժ տալով տիրացու Միհրանի քահանայացւոյն գէմ եղած բողոքին՝ խնդիր մը պիտի յարուցանէին որուն արդիւնքը գիւրին էր նախատեսել:

Առաջնորդը, որուն ստիպումին վրայ Տ. Միհրան Ղազարոսեան յանձն առած էր քահանայ օծուիլ, պիտի յամառէր իր որոշման վրայ ու պիտի համոզէր Վսեմ. Բարթող պէյն ալ տեղի չի տալ բողոքարկուներուն, որոնք բնականաբար կէս ճամբան պիտի չուղէին մնալ ու անա՛՛ անխուսափելի բախումը առաջ պիտի դար:

Իրենց ծրագրին այս առաջին մասը, պէտք է ըսել, կատարելապէս յաջողեցաւ, գուցէ նոյնիսկ իրենց յուսացածէն շատ աւելի փայլուն կերպով:

Ծրագրին երկրորդ մասն էր ծագելիք խառնակութիւնները շահագործել եւ անոնցմով օգտուիլ Վսեմ. Բարթող պէյի ժողովրդականութեան հարուած մը տալու համար:

Այս երկրորդ մասին մէջ սակայն, չարաչար խայտառակուեցաւ վարկաբեկ խմբակը: Ժողովուրդը առաջին վայրկեանի յուզումէն այնինչ սթափած, կըցաւ իր ողջմտութեամբը որոշել թէ որո՞նք էին շարաթիրիկուան իրարանցումին եւ Ս. Պօղոս Պետրոսի եկե-

(*) Փիւնիկի 17րդ թիւին մէջ «Դաւ մը» խորագրով գրած յօդուածիս մէջ այդ ստորագրութիւններէն խառնելով կարծած էի որ նոյնիսկ հանրագիրը այդ ինկած խմբակի ձեռքով հրատարակ եղած է, մինչդեռ ինչացայ որ «Մահեմեդական» կուսակցութեան պատկանող մէկ քանի անձեր յղացած էին զայն իրենց անկեղծ համոզումէն զրդուած:

ղեցիին՝ մէջ տեղի ունեցած գայթակղութեան բո՛ւն պատասխանատուները: Ի զո՛ւր Լեւոն Մկրտիչեանի պաշտօնաթերթը՝ Արշալոյս՝ ջանաց ամբաստանել Վսեմ՝ Բարթող պէյը, ի զո՛ւր վարկարեկ խմբակը իր անզօր ճիգը թափեց սրճարաններու մէջ Բարթող պէյի գէմբունն բրորականտ մը մղելու. ասոնց ամէնուն արդիւնքը այն եղաւ որ ակն յայտնի կերպով երեւան եկաւ թէ տիրացու Միհրանի խնդրին մէջ վարկարեկ խմբակի փնտոածը ուրիշ բան չէր, այլ թէ տապալել Բարթող պէյի հետզհետէ ալ աւելի հաստատուն հիմնու վրայ կառուցուած ժողովրդականութիւնը:

Ասոր համար վարկարեկ խմբակը իր յոյսը դրած էր անշուշտ ժողովրդին դիւրափոփոխ ու յեղյեղուկ զգացմունքին վրայ: Բարեբախտաբար Ալեքսանդրիայի հայերը ցոյց տուին որ կարծուածին չափ դիւրափոփոխ չեն ու գիտեն որ եւ է հանրային անձնաւորութեան մը վրայ պաղարիւնով վճիռ արձակել, անոր յատկութիւններն ու թերութիւնները, իր օգուտն ու վնասը, լաւ մը կշռելէ ետքը:

ԵՐԹԱՍ ԲԱՐՈՎ

Կեցցէ՛ Գրիգոր Մեկքոնեան:

« Կէչտի Պորըն բազարը, սի՛ւր էշէյի Նիյտէյէ » խրատ տուած էինք մեր մարդուկին Փիւնիկի 17 ողթիւին մէջ:

Գոհ ենք որ հետեւած է մեր խրատին հրաժարելով խնամակալութեան պաշտօնէն: Եւ անկեղծօրէն Կըսինք, միշտ աւելի պիտի շահի մտիկ ընելով մեր տուած խրատներուն, քան Լեւոն Մկրտիչեանի տուածներուն:

Միայն թէ այդ ծիծաղաչարժ մարդուկը բան մը չի կրնար ընել առանց բրօթեքսօ ընելու: Պէտք է անպատճառ որ բրօթեքսօ ընէ:

Տեսակ մը անբուժելի մենամոլութիւն:

— Բարե՛ւ, Մեկքոնեան էֆէնտի, ըսողին՝

— Բրօթեքսօ իսերիւ, կը պատասխանէ:

Երբ Գարրիէլ հրեշտակապետ գայ հողին առնելու:

— Բրօթեքսօ իսերիւ, պիտի պոռայ:

Վերջին դատաստանին, երբ տխրահոշակ «գանձանակը մեզքուր»ին համար զինքը Արքայութեան արժանի դատէ Յիսուս Գրիտոս, նորէն՝

— Բրօթեքսօ իսերիւ, պիտի մրուտայ քիթին տակէն:

Արդ, ասանկ քօնաֆ մարդու մը հրաժարականն ալ բնականաբար պէտք էր որ բրօթեքսօյով մը ընկերացած ըլլար ու իրօք ալ այնպէս է:

Լեւոն Մկրտիչեանի պաշտօնաթերթը, Արշալոյս, հրատարակեց թէ՛ Գր. Մեկքոնեանի հրաժարականը եւ թէ բրօթէսթօն, երկուքն ալ առաջնորդին ուղղուած եւ երկուքն ալ տաճկերէն լեզուով խմբագրուած:

Հրաժարականը կոշտ ու կոպիտ գրութիւն մըն է, որուն մէջ կարգ մը անիրաւ յարձակումներ ընելէ յետոյ Վսեմ. Բարթող պէյի պաշտօնավարութեան մասին, Գ. Մեկքոնեան կը յայտնէ որ այլեւս պէ՛տէ չը կրնայ մասնակցիլ խնամակալութեան:

Բրօթեքսօն առաջնորդին կը յայտնէ որ Գ. Մեկքոնեան պատասխանատու չէ այն ցաւալի դէպքերուն որոնք կրնան տեղի ունենալ եթէ առաջնորդը անպատճառ քահանայ ձեռնադրել ուղէ տիրացու Միւրանը:

Քանի որ Գ. Մեկքոնեան հրաժարական կուտայ իր խնամակալի պաշտօնէն, արդէն ինչպէ՞ս պատասխանատու կրնայ համարուիլ իր հրաժարականը տալէն յետոյ պատահելիք ցաւալի զէպքերուն :

Այդ թիւթիւնձի խնդճ ցաւագարին քովը քիչ շատ բաներուն մէկը չի գա՞ր որ խրատէր իրեն գոնէ այդ յետին տխմարութիւնը չգործելու .

Ես կ'ենթադրեմ որ գիտել տուած են անշուշտ իր հակատութիւնը, բայց ինք անդրդուելի յամառութեամբ պատասխանած է .

— Եօf, իլլիք քրօքէքօ իսկնէյիւf :

* * *

Կը լսենք թէ խնամակալութիւնը իր վերջի նիւտին մէջ նկատողութեան առեր է Գր. Մեկքոնեանի թրքախօս հրաժարականը եւ անմիջապէս ընդուներ է զայն, ցաւ յայտնելով սակայն հրաժարագրին կոպիտ շարադրութեանը համար :

Կ'երեւայ որ մեր խնամակալները՝ միամտօրէն՝ մարդավարութիւն կը սպասեն եղեր իրենց նախկին պաշտօնակցէն :

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԸՍՏ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ

Ամէնքս ալ քիչ շատ խնդացինք երբ իմացանք որ Գրիգոր Մեկքոնեան առաջնորդին դիմելով բողոքեր է տիրացու Միհրանի ձեռնադրութեան զէմ առարկելով որ ենթական եկեղեցական ըլլալու համար հարկ եղած ուսմունքը չունի: Գրիգոր Մեկքոնեան մը որ քահանայացուի մը կրօնային գիտութեան մասին

վճիռ կ'արձակէ, շիտակը բաւական խեղկատակ իրողութիւն մըն է : Մարդ կը փորձուի հարցնել այդ տգէտ մարդուկին թէ՛ եկեղեցական ուսմունք ըսելով ի՞նչ կը հասկնայ, կամ արդեօք տիրացու Միհրանը ի՞նչ քննութեանէ անցնելէ ետքը զայն անարժան դատած է քահանայութեան : Վերջապէս շատ թօնաճ բան մը պիտի ըլլար զիտնալ թէ Գրիգոր Մեղքոնեանի մը համար տրպար եկեղեցական մը ի՞նչպէս ըլլալու է :

Ասոր պատասխանը գուցէ գտնենք երբ յիշենք հին պատմութիւն մը :

Ժամանակաւ, Կեսարիոյ մէջ, Գրիգոր Մեղքոնեանի նախնիքն ալ ուսումնական վարդապետ մը ունենալու տենդով տոչորուն, կը դիմեն պատրիարքարան ու կը խնդրեն որ իրենց վարդապետը ետ կանչուի եւ անոր տեղ « ուսումնական » վարդապետ մը զրկուի :

Պատրիարքարանը նկատողութեան կ'անէ խնդիրը եւ գոհացում կուտայ Կեսարիոյ մենծ աղաներուն :

Հին վարդապետը ետ կը կանչուի ու տեղը նոր մը կը զրկուի, նոյն ժամանակի ուսումնական դասէն :

Վարդապետը կը հասնի Կեսարիա ու կ'առաջնորդուի մենծ աղաներէն մէկուն տունը :

— Ինտո՞ր է ուսմունքը, կը հարցնեն իրարու մենծ աղաները :

— Կեցէ՛ք նայինք, քարոզ մը խօսի որ յալտնի ըլլայ :

Կիրակի օր վարդապետը իր անդրանիկ քարոզը կուտայ .

— Օրհնեալ ժողովուրդ, Գործք Առաքելոցի 16րդ գլուխը կ'ըսէ թէ՛ ճշմարիտ հաւատացեալները վերջին դատաստանի օրը արդարներուն կողմը պիտի դաս-

ուին. նոյնը կը հաստատէ նաեւ Պօղոս Առաքեալ իր առ Թեսաղոնիկեցիս գրած երկրորդ թղթին 12րդ գլխուն մէջ. եւն:

Մենձ աղաները յուսախար դուրս կ'ելլեն եկեղեցիէն ու կը հաւաքուին խորհրդարանը:

— Չեղաւ աս, մեր գործին չի գար, կ'ըսէ մէկը.

— Ինչո՞ւ :

— Չլսեցի՞ր, հաճի աղա, անճախ անճախ Գործք Առաքելոցին 16 րդ գլխէն կրնայ կոր վկայութիւն բերել:

— Իսկ Պօղոս Առաքեալին 12 րդ գլխէն անդին չկրցաւ անցնիլ :

— Չէ', չէ', աս մարդուն սնտուկը ձեռքը տալու ետ դարձնելու է, մենք ազէտ վարդապետ չենք ուզեր ուսումնական կ'ուզենք :

Ու խեղճ մարդը կը վերադարձնեն Պոլիս, նոր խնդրագրով մը ուսումնական վարդապետ ուզելով պատրիարքարանէն :

Պատրիարքը կեսարացի մենձ աղաներուն խօսքը չկտորեք ու իր վարդապետներուն ամէնէն ուսումնականը կը զատէ ու ճամբայ կը հանէ :

Դարձեալ առօք փառօք կ'ընդունուի նոր վարդապետը ու կերակի օր կը խօսի իր քննութեան քալողը :

— Օրհնեալ ժողովուրդ, Սողոմոն իմաստուն իր Առակաց գրքին 22 րդ գլխին մէջ կ'ըսէ որ երկիւղած մարդը Աստուծոյ ընտրեալն է, ինչպէս որ Մատթէոս Աւետարանի 36 րդ գլխին մէջն ալ ըսուած է թէ՛ ...եւն:

Հաւաքում մենձ աղաներու, խորհրդարանին մէջ:

— Աս ալ չեղաւ :

— Ի՛նչ, նորէն միւսին հետ քաղդատելով սանկ

քիչ մը ուսմունքը բարձր է, Աւետարանին մինչև 36 ըդ դրուխը ելաւ, բայց նորէն մեր գործին չի գար. շէնք շնորհք ուսումնական վարդապետ մը պէտք է մեզի :

— Սողոմոն իմաստուն, Պողոս Առաքեալ, Եսայի մարգարէ, ասոնք ամէն մարդ գիտէ. չըլլար, նանըն, աս վարդապետն ալ չըլլար :

Վարդապետը յաջորդ շարժու Պոլսոյ ճամբան ձեռք կ'առնէ :

Նոր դիմում պատրիարքարան՝ ուսումնական վարդապետ խնդրող :

Պատրիարքը շուարած է :

— Ի՞նչ տեսակ վարդապետ զրկելու է աս մարդոց որ գոհ ըլլան կը մտածէ :

Այն ատենները Դաւիթ վարդապետ մը կայ եղեր Մայր Եկեղեցին, գաւառացի տգէտ կրօնաւոր մը, քիչ մըն ալ փախուկ : Կը լսէ պատրիարքին մտմտուքը եւ կ'երթայ զինքը կը գտնայ :

— Սրբազան հայր, զիս զրկեցէ՛ք Կեսարիա, ես ան մարդիկը գոհ կ'ընեմ :

— Ի՞նչ կ'ըսես, դո՞ւն մի, ես երկու անոանկ ուսումնական վարդապետ զրկեցի ու ետ դարձուցին, քեզի ինչպէ՞ս պիտի հաւնին :

— Սրբազան Հայր, ես գիտեմ անոնց ուզած ուսումնականը, զրկէ՛ ինձի ու տե՛ս ինչպէս շնորհակալ պիտի ըլլան քեանէ :

Չ'երկնցունենք Դաւիթ վարդապետ կը հասնի Կեսարիոյ մօտերը գեղ մը. Հոնկէ մէկը կը զրկէ քաղաք մենձ աղաներուն մօտ, որ կուգայ ու վարդապետին կողմէ կ'ըսէ :

— Ի՞նչ աւանակ մարդիկ էք դուք, ձեր առաջ-

նորդը եկեր է ու դիմաւորելու չէ՞ք երթար, եւն:

Մենձ աղաները իրար կ'անցնին:

— Աս վարդապետը զօռչը մէկը կ'երեւայ կոր,
կը փախան ու էջերը նստելով կ'երթան ընդ առաջ:

Հոն ալ լաւ մը կը լուայ գերեւնք Դաւիթ Վար-
դապետ:

Մենձ աղաները ձեռքերը համբուրելով, հազար
ներում խնդրելով, վերջապէս սիրտը կ'առնեն եւ կը
մտցունեն քաղաք:

Կիրակի օրը Դաւիթ վարդապետ կը քարոզէ.

— Ձեզի պէս աւանակներուն ի՞նչ խօսիմ որ
հասկնաք, դուք ի՞նչ տեղեկութիւն ունիք գիրքերէն
ու մարգարէներէն: Ձեզի պէս սգէտներուն համար չէ՞
որ Իգնատիոս մարգարէն իր գրքին հարիւր երեսունը
վեց հազար ութը հարիւր իննուսունը վեցերորդ գըլ-
խին մէջ կ'ըսէ «բարձեալ է ի նոցանէ ամենայն ի-
մաստութիւն», Փափիասոս իմաստունն ալ իր գրքին
երկու հարիւր վաթսուն հազարերորդ գլխին մէջ կ'ըսէ.
«որպէս զաւանակն Բաղասամու» եւն:

Ու այսպէս Դաւիթ վարդապետ ժամ մը կը
խօսի:

Մենձ աղաները ապուշ կտրած, հիացած, յափըշ-
տակուած մտիկ կ'ընեն:

Խորհրդարանին մէջ:

— Տեսա՞ք մի ուսումնական վարդապետը:

— Իգնատիոս Մարգարէ, Փափիասոս Իմաստուն,
... ո՞ր վարդապետէն լսած էինք սա անուանները:

— Վկայութիւնները հապա, հարիւր հազարերորդ
գլխէն վար վկայութիւն չբերեր կոր:

— Կեցցէ՛ Դաւիթ վարդապետ, գտանք վերջա-
պէս մեզի պէտք եղած ուսումնական մարդը:

Ու ամիո մը ետքը Պատրիարքը կ'ընդունի ամենախորին շնորհակալութեան գիր մը Դաւիթ վարդապետի մասին:

Երբ լսեցի որ Դրիգոր Մեկքոնեան տիրացու Միհրանը ուսմունք չունենալուն համար քահանայացման անարժան համարողներուն հետ է, յիշեցի այս պատմութիւնը:

Շատ հաւանական է որ իր «ուռումնական»ը Դաւիթ վարդապետն է:

ՄԻԱԿ ՄԻՋՈՅՑ

«Ազատ Խօսք»ի ճրգ տետրին մէջ, պատասխանելով Յ. Օհանեան ստորագրութեամբ մեզի ուղղուած մէկ թշնամական յօդուածին, որուն մէջ «անբարոյական» նկատուած էինք. հետեւեալ տողերը գրած էինք:

«Ձեռք գիտեր ի՞նչ բարոյական է պ. Յ. Օհանեանինը. բայց կը հարցնենք թէ՛ արդեօք Մեկքոնեան եղբայրներու մէկ քննադատելի արարքը հրապարակելէ աւելի իրական անբարոյականութիւն չէ՞ Չէյթունցի սովեալներու ի նպաստ զրկուած գրամը կոկորդն անցունել ու փախչելը ու յետոյ խայտասակարար վախտուիլը յեղափոխական կուսակցութենէ մը:»

Լեւոն Մկրտիչեան իր պաշտօնաթերթին 312 թիւին մէջ նամակով մը կը փորձէ հերքել այդ տողերը եւ ասոր համար բոլորովին կը խեղաթիւրէ մեր գրածը:

Լեւոն Մկրտիչեան մեզ ըսել կուտայ որ Յ. Օհանեան Հնչակեան կուսակցութեան կեդրոնէն իրեն զրկուած գրամը իւրացուցած է:

Եւ մեր չըսածը այսպէս մեզ ըսել տալէ ետքը,

իբր Հնչ. կուսակցութեան կեդր. վարչութեան անգամ, հերքում կուտայ մեզի պաշտօնապէս:

Պահիրէի հնչակեան մասնաճիւղն ալ հետեւելով Լեւոն Մկրտիչեանի խաբեբայական դրութեան, նոյնպէս պաշտօնական հերքում մը կը հրատարակէ այն քուրջի աղտոտ կտորին մէջ, զոր խմբագիրներու Թորոսեանը չամչնալով իբր լրագիր կը կլլեցնէ հասկութեան:

Չէինք ուզեր վերադառնալ այդ խնդրին: Մեր յօդուածը գրուած էր Մելքոնեանց տիրանոչակ գանձանակին առթիւ եւ եթէ, առանց որոշ անունի, հեռուէն ակնարկութիւն մը ըրած էինք Յ. Օհանեանի, պարզապէս դիպումսական բան մըն էր եւ միմիայն պզտիկ դաս մը տալու համար իրեն. որպէսզի ուրիշ ատեն թեթեւ կերպով վճիռ չարձակէ այլոց բարոյականին մասին: Ճաւալի է որ Լ. Մկրտիչեանի, հնչ. մասնաճիւղի ու Ապահի անհարկի միջամտութեամբը խնդիրը հարկ պիտի ըլլայ կրկին արծարծել:

Արդ, ահա՛ մեր գիտցածը:

Մեծահարուստ հայ մը, Բարիզէն մէկ քանի անգամ Ձէյթունի կարօտեալներու համար դրամ կը զրկէ Բարիզ գտնուող հնչակեան կարեւոր գործիչի մը ձեռքով: Վերջին առաքումը իր տեղը չհասնիր եւ կը ստուգուի որ Յ. Օհանեան, որու զրկուած էր դրամը, չէ հասուցած զայն իր տեղը:

Կրնայինք անուններ յիշել, աւելի ուժ տալու համար մեր գրածին, սակայն չենք ուզեր Ազատ Խօսքին մէջ այդ տեսակ խնդիրներով զբաղիլ: Այս իրողութեան կարեւորագոյն վկաները Յգիպոսոս կը գտնուին եւ կրնանք իրենց վկայութեան դիմել այն օրը ուր Յ. Օհանեան փափաքի պատուոյ Ատեանով մը լուծել

խնդիրը: Եթէ այդ տեսակ Ատեան արդարացնէ զինքը բնականաբար մենք առաջինը պիտի ըլլանք մեր խօսքերը եւ առնող: Կը ոպասենք:

PRO DOMOSUA

Լեւոն Մկրտիչեան իր պաշտօնաթերթին 316 ըդ թիւին մէջ իր ամբողջ թունաւոր ժահրը կը թափէ մասնաւորապէս ինծի դէմ: Այս անգամ ա՛լ չխժփծեր, չխեղաթիւրեր, այլ պարզապէս՝ շնաբար կը ստէ: Իր թղթակցութիւնը, մէկ ծայրէն միւսը, անպատկառ, լիբը ու անամօթ սուտերու շարք մըն է: Երբեք բարոյականի գիտակցութիւնը այս ատոիճան կոյրցած չէր մարդու մը մէջ: Ա՛լ հիւանդ մը, բարոյապէս աստաւորած մէկը կը նկատենք զինքը: Ինչո՞ւ սակայն կատարած շունի իր այս մոլեգնութիւնը:

Ինք իսկ տուած է ասոր բացատրութիւնը:


— 12 ոսկի եւ ամսական ունէի, 9 ոսկի Ասքանազը եւ 5 ոսկի քենիս, մեզ ճամբելով առաջնորդարանէն ու դպրոցէն, ամսական 26 ոսկի փեսա մը տուին ընտանիքիս, հետեւաբար ձեռքէս եկածը պիտի ընեմ փեսա բերելու համար իրենց:

Լեւոն Մկրտիչեան կ'ուզէ եղեր որ ազգը յաւիտեան 26 ոսկի ամսական կապէ իրենց: Վսեմ. Պօղոս փաշտ Նուպար եւ նոր խնամակալութիւնը չհաւանեցան ասոր: Եւ ահա՛ Լեւոն Մկրտիչեան իր անզօր ջանքերը կը թափէ մրտտելու, անուանարկելու համար Վսեմ. Բարթող պէյը, որ Վսեմ. Պօղոս փաշայի հրաժարումովը, կը ներկայացնէ ներկայ խնամակալութիւնը:

Խղճալով հանդերձ իր վրայ, կը հասկնանք այս
ամէնը, սակայն իր կատաղութիւնը մեզի դէմ : Ի՞նչ
յանցանք ունի այս ամէնուն մէջ Երուանդ Օտեան:
Որովհետեւ գործիք մը ըլլաւ չուզէ՞ր իր վարկաբեկ
խմբակին ձեռքը :

Ամէն սրարագային իր ցած զրպարտութիւնները
մեզի դէմ շատ չեն յուզեր մեզի :

Ժողովուրդը բաւական կը ճանչնայ Երուանդ Օտեանը եւ խիստ լաւ կը ճանչնայ Լեւոն Մկրտիչեանը:
Ասիկա բաւ է իր դատապարտութեանը համար:



Եգիպտոսի համար հասը

ՄԷԿ ՂՐՈՒՇ ՈՂԶ

Արտասահմանի համար հասը

ԿԷՍ ՅՐԱՆՔ

Ճամբու ծախքը մեր վրայ, մեր հասցէն է՝

YERVANT ODIAN

Poste Restante

(Egypte)

Alexandrie

ԳՐԵՑ ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՀԱՅԿ. ՏՊԱՐԱՆ «ԱՐԱՒՎ»
